

ենք անում մեր հաջողությունների և ձայնողումների վերաբերյալ»: Ես կավելացնեի, մի նայեք այսօրվա փորձություններին որպես հավերժական: Երկնային չոր գործը երկարաժամկետ է: Մարգարե Չոզենֆ Մաիթն ասել է. «Շատ բաներ կան, որ սպասվում են ապագայում: Հետևաբար ... եկեք ուրախությամբ անենք ամեն բան, որ մեր ուժի սահմաններում է. և հետո, թող մենք կանգնենք հանգիստ, ամենայն համոզվածությամբ՝ տեսնելու Աստծո փրկությունը և նրա բացահայտվող բազուկը» (Վեռն 123.15, 17):

Այս Չատիկի Կիրակի, ես հույս ունեմ, որ մենք հնարավորություն կունենանք բերելու մեր վկայությունները, որ մենք գիտենք, որ Աստված ապրում է և որ Հիսուսը Քրիստոսն է: Ես հույս ունեմ, որ մենք կբերենք մեր վկայությունները, որպեսզի մեր ներխաճանքը իմանան, թե որտեղ են մեր սրտերը և որ մենք սիրում ենք նրանց: *Մեծագույն սերն ու մեծագույն ուսուցումը պետք է լինեն մեր տներում:*

Ես խնդրում եմ, որ Տիրոջ օրհնությունները լինեն ծնողների և ներիտասարդների հետ, որոնք մեծանում են հավատքով լի տներում, որ նրանք հասկանան, թե ինչ ուրախություն է լինել ընտանիքում, որտեղ կարող են իրենց սիրված զգալ, ուղղություն ստանալ և առաջնորդվել: Իմ աղոթքն է, որ մենք լինենք հավերժական ընտանիքներ և հավերժ միասին Հայր Աստծո և Նրա Որդի՝ Հիսուս Քրիստոսի ներկայության մեջ:

Ես իմ հատուկ վկայությունն եմ բերում, որ Հիսուս Քրիստոսն ապրում է: Նա կորած ոչխարների հովիվն է, մոլորված հոգիների փրկարարը, վիրավորված սրտերի բժիշկը, ողջ մարդկության հույսը: Որպես մեր Վարդապետ Նրա հետ եկեք կատարենք Աստծո հանդեպ մեր պարտավորությունը՝ հավատքով առ Նա և Նրա հավերժական սերը մեզանից յուրաքանչյուրի հանդեպ, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՍ**

1. See “Maud Muller,” *The Complete Poetical Works of John Greenleaf Whittier* (1876), 206.



**Երեց Բրնդի Դ. Ֆոսթեր**  
Յոթանասունից

# Մայրիկն է ինձ ասել

*Միգուցե, մենք բոլորս այդ կերպ ենք պատասխանում մեր մայրերի սիրուն, որովհետև այն մայրնապոքում է մեր Փրկչի սերը:*

Տերը կարևոր պատասխանատվություն է տվել ծնողներին իրենց զավակներին հոգևոր սնուցում տալու համար: Երբեմն այդ պատասխանատվությունը ընկնում է միայնակ ծնողի վրա: Մայրս համեմատաբար երիտասարդ էր, երբ հայրս մահացավ, թողնելով նրան միայնակ չորս երեխաների հետ: Սակայն նա հավատքով և քաջությամբ դիմակայեց դժբախտությանը, խոստանալով մեզ, որ եթե մենք մնանք ճշմարիտ ուղու վրա, վերջում ավելի լավ կլինի, քան սկզբում: Մորմոնի Գրքի քաջարի մայրերի զավակների պես, «մենք չկասկածեցինք, մեր [մայրը] գիտեր դա» (Ալմա 56.48): Եղբայրներ և քույրեր, ես իմ մաշկի վրա եմ զգացել, որքան մեծ ազդեցություն են թողնում մայրերը:

Իմ մոտ ընկեր Դոն Փիրսոնը մի անգամ կիսվեց իր փորձառությամբ, որը ցույց է տալիս այդ ազդեցությունը: Մի երեկո, իր չորսամյա որդին, Էրիկը, խնդրում է նրան իր համար գիրք կարդալ: Էրիկն ընտրել էր իր սիրելի գիրքը՝ *Փառի Փորթի օղասպարիկով սրկածները*: Դա պատմություն է մի ընտանիքի մասին, որն ապրում էր ծովի կղզիների վրա և օդապարիկով ճամփորդում մի կղզուց մյուսը: Գիրքը նկարագարո էր, տեքստ չկար, այնպես որ Եղբայր Փիրսոնը

իր խոսքերով սկսեց պատմել այն: «Փառին օդապարիկով իջնում է կղզու վրա: Նա օդապարիկի կողքից թռչել է իջնում է ներքև»:

Էրիկն ընդհատեց նրան. «Հայրիկ, ոչ թե թռչ, այլ *սրսրան*»:

Եղբայր Փիրսոնը նայեց Էրիկին և ապա գրքի նկարին, և շարունակեց. «Փառին դուրս է գալիս օդապարիկից և ծառից իջնում: Օ՛, ոչ, նրա վերարկուն կառչել է ճյուղից»:

Էրիկը կրկին ընդհատեց նրան. «Հայրիկ, ոչ թե վերարկու, այլ *բաձկն*»:

Այդ ժամանակ Եղբայր Փիրսոնն անհանգստացավ և, Դիմելով, տղային ասաց. «Էրիկ, այս գրքում բառեր չկան, միայն նկարներ են: Ինչո՞ւ ես պնդում, որ դա բաձկն է»:

Էրիկը պատասխանեց. «Որովհետև մայրիկն է ինձ ասել»:

Հայրը փակեց գիրքը և ասաց. «Էրիկ, ինչ ես կարծում, ո՞ւմ խոսքն է հիմնականում անցնում այս տանը»:

Այս անգամ Էրիկն ուշադիր մտածեց և պատասխանեց. «Քոնը, հայրիկ»:

Եղբայր Փիրսոնը ժպտաց որդուն՝ ինչպիսի՜ բացառիկ պատասխան: «Որտեղից գիտե՞ս», հարցրեց նա:

Էրիկն արագ պատասխանեց. «Մայրիկն է ինձ ասել»:

Ինչպես նախագահ Չեյմս Ի. Ֆաուստն է ասել. «Մայրության մեջ է



ամփոփվում ողջ աշխարհի բարոթյունը: Անչափելի է մոր ազդեցությունն իր նրեխաների կյանքում» (“Fathers, Mothers, Marriage,” *Liabona*, Aug. 2004, 3).

Ըստ աստվածային ծրագրի, դաստիարակելը կանանց տրված հոգևոր ժառանգության մասն է: Ես տեսնել եմ դա դուստրերիս մեջ: Տեսնում եմ թռռներին մեջ, նույնիսկ նախքան քայլել սովորելը, նրանք ցանկանում էին զրկել իրենց տիկնիկներին և խնամել նրանց:

Լինելով ազգարակատեր և աշխատելով ազգարակում, ես հնարավորություն եմ ունեցել մոտիկից տեսնելու, թե ինչպես է մայրական բնական սերը դրսևորվում բնության մեջ: Ամեն գարուն մենք կովերի և նրանց նորածին հորթերի նախիրը քշում ենք Սյոդահոյի Սնեյք Գետի ավիով, որտեղ նրանք մոտ մեկ ամիս արածում են սարերի ստորոտում: Այս մենք հավաքում ենք նրանց և քշում ճանապարհով ներքև դեպի փարախները: Այնտեղից նրանց լցնում են բեռնատարների մեջ և տանում Մոնտանայի ամառային արոտավայրերը:

Մի հատկապես շոգ գարնանային

օր ես օգնում էի նախիրը հավաքել, քշելով հոտի հետևից, որը շարժվում էր դեպի փարախը տանող փոշոտ ճանապարհով: Իմ գործը ճանապարհից շնդված հորթերին հավաքելն էր: Նրանք դանդաղ էին շարժվում, և ես խորհելու ժամանակ ունեի:

Քանի որ շատ շոգ էր, հորթուկները շտապում էին ծառերի ստվերի տակ: Իմ միտքն եկան Եկեղեցու երիտասարդները, ովքեր երբեմն շնդվում են նեղ ու անձուկ ճանապարհից: Ես նաև մտածեցի նրանց մասին, ովքեր հեռացել են Եկեղեցուց կամ մտածել են, թե Եկեղեցին լքել է իրենց սիրտը, երբ նրանք շնդվել են ճանապարհից: Ես մտածեցի, որ շնդվելը պարտադիր չէ, որ չարից գա, վնաս հասցնելու համար: Երբեմն դա կարող է ստվեր լինել:

Մի քանի ժամ շարունակ ես փորձում էի հավաքել ճանապարհից շնդված հորթերին, քրտիքը հոսում էր դեմքիս վրայով, և ես հուսակտուր բղավեցի հորթերի վրա. «Նետևեք ձեր մայրերին: Նրանք գիտեն ուր պետք է գնան: Նրանք նախկինում անցել են այս ճանապարհով»:

Նրանց մայրերը գիտեին, որ, թեպետ այդ պահին շոգ էր և ճանապարհը փոշոտ, հետագայում ավելի լավ էր լինելու:

Երբ վերջապես նախիրը հավաքեցինք փարախում, տեսանք, որ նրեք կովեր նյարդայնացած շարժվում են դեպի դարպասը: Նրանք չէին կարողանում գտնել իրենց հորթերին և կարծես զգում էին, որ նրանք մնացել են ճանապարհին ինչ-որ մի տեղ: Կովբույներին մեկը հարցրեց ինձ, թե ինչ անենք: Ես ասացի. «Ինձ թվում է ես գիտեմ, թե որտեղ են այդ հորթերը: Մեկ քարոդ մղոն հետ սաղարթախիտ ծառեր կան: Վստահ եմ, նրանք այնտեղ են»:

Ես ճիշտ էի, ինչպես որ կասկածում էի, մեր կորցրած հորթերը նիրհում էին ստվերում: Երբ մոտեցանք, և ուզում էինք նրանց հավաքել, նրանք խրթնաձև դիմադրում էին մեզ: Նրանք վախեցան, որովհետև մենք նրանց մայրերը *չէինք*: Որքան մենք նրանց ցանկանում էինք տանել դեպի փարախը, այնքան նրանք կամակոր էին դառնում, և ի վերջո ես ասացի կովբույներին. «Կենրեք տղաներ, ես ավելի լավ միջոց գիտեմ: Եկեք հետ գնանք և նրանց մայրերին բերենք այստեղ: Կովերը կգան և իրենց հորթերին կգտնեն, և հորթերը կհետևեն իրենց մայրերին»: Ես ճիշտ էի: Մայր կովերը ճիշտ գիտեին, թե որտեղ պետք է գտնեին իրենց հորթերին, և նրանք իրենց նտևից հորթերին բերեցին փարախ, ինչպես ես էի ենթադրել:

Եղբայրներ և քույրեր, այս աշխարհում, որտեղ յուրաքանչյուրին ազատ կամք է տրված, մեր սիրելիներից ոմանք կարող են որոշ ժամանակով շնդվել: Սակայն մենք երբեք չպետք է հուսահատվենք: Մենք պետք է միշտ ետ գնանք նրանց համար՝ երբեք չդադարելով փորձել: Մեր մարգարեն՝ Նախագահ Թոմաս Մ. Մոնտանո, մեզ խնդրել է գնալ և փրկել մեր կորած սիրելիներին (տես, օրինակ, “Stand in Your Appointed Place,” *Liabona*, May 2003, 54–57): Քահանայության ղեկավարների օգնությամբ ծնողները պետք է շարունակեն ետ գնալ և գտնել իրենց կորած երեխաներին, նրանց հավաստիացնելով, որ միշտ



«տունը», ընտանիքն ու Եկեղեցին նրանց վերադարձին են սպասում: Մենք երբեք չգիտենք, թե երբ սիրտը կարող է շրջվել: Մենք երբեք չգիտենք, թե երբ կարող է հոգին հոգնել ու մաշվել աշխարհից: Երբ դա տեղի է ունենում, միշտ երեխաներն առաջինը իրենց Մայրիկին են դիմում, այնպիսի զգացումներով, որոնք արտահայտված են Էլիզաբեթ Աքերս Ալենի այս բանաստեղծության մեջ.

*Ետ պսակը, Օ՛, տարիներ իմ  
անցած,*

*Մաշվել նա՛ չարչարանքից,  
սպրցունքներից հեղված,*

*Հոգնել նա՛ խոսքերից՝ դատարկ,  
ստոր ու ևսխատ,*

*Մայրի՛կ, տննչում է քնդ սիրտու  
կպտումս:*

*Իմ անցած օրերում սիրտն իմ  
երբեք*

*Մոր սիրտ պես սեր դեռ չի  
ճանաչել:*

*Մայրիկի՛ պես ոչ ոք ցավը չի  
վստել,*

*Իմ խոցված հոգուց և մտքից  
հոգևատուսել:*

*Ծանրացած կուպերիս իջել  
է քուն,*

*Օրորիք ինձ, մայրի՛կ, քնել նա՛  
նզում:*

*(“Rock Me to Sleep,” in The Family  
Library of Poetry and Song, ed.*

*William Cullen Bryant [1870], 190–91;  
punctuation modernized.)*

Միգուց, մենք բոլորս այդ կերպ ենք պատասխանում մեր մայրերի սիրուն, որովհետև այն մարմնավորում է մեր Փրկչի սերը: Ինչպես Նախագահ Չոզլնֆ Ֆ. Սմիթն է ասել. «Մայրական ճշմարիտ սերն էությամբ ավելի մոտն Աստծո սիրուն, քան որևէ այլ տեսակի սիրուն»: (“The Love of Mother,” *Improvement Era*, Jan 1910, 278)

Ինչպես ամեն ինչում, Փրկիչը կատարյալ օրինակ ծառայեց այն սիրով, որ Նա տաժում էր Իր երկրային մոր հանդեպ: Անգամ Իր մահկանացու կյանքի վերջին պահերին, Գեթսեմանի տառապանքի ժամանակ, որտեղ կար ծաղրանք, փշերից պսակ, ծանր խաչ, որի վրա Նրան դաժանաբար գամեցին, տինգերքական այդ կենտրոնամետ պահին Հիսուսը խաչի վրայից ներքև նայեց և տեսավ Իր մորը, Մարիամին, որն եկել էր իր Որդու հետ լինելու համար: Նախքան մահանալը Նա մի վերջին անգամ սերցուցաբերեց, հավաստիանալով, որ իր մայրը հոգատար ձեռքերում է, ասելով Իր աշակերտին. «Ահա քո մայրը» (Հովհաննես ԺԹ.27), և հենց այդ պահին այդ աշակերտը իր տուն տարավ նրան: Ապա Հիսուսը գիտեր, որ «ամեն բան արդեն լրացած է», Իր գլուխը խոնարհեց և մահացավ (տես Հովհաննես ԺԹ.28–30):

Այսօր ես կանգնած եմ ձեր առջև և բերում եմ իմ վկայությունը, որ Հիսուս Քրիստոսը Փրկիչը և Քավիչն է աշխարհի: Սա Նրա Եկեղեցին է, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին: Մեր Երկնային Հայրը ցանկանում է, որպեսզի Իր բոլոր զավակները վերադառնան Իր մոտ: Ես սա անկասկած գիտեմ իմ սրտում Սուրբ Հոգու վկայության շնորհիվ: Ես միշտ չեմ իմացել, երբ փոքր էի, ստիպված էի ապավինել ծնողներիս վկայությանը: Մայրս հավաստիացնում էր ինձ, որ եթե ես մնամ ճիշտ ուղու վրա, եթե անգամ թվում է շոգ է ու ճանապարհը փոշոտ, նույնիսկ եթե լինում են ուղուց շեղումներ, վերջն ավելի լավ կլինի, քան սկիզբը: Ես հավերժ երախտապարտ կլինեմ, որ Մայրիկն է ինձ ասել, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■